

ԵԱՏՄ երկրների մակրոտնտեսական ցուցանիշների վրա հարկերի խթանիչ գործառնության ազդեցության վերլուծությունը

ՀՏԴ 336

Թավադյան Էմմա Ա.

ՀՊՏՀ, Ծիմանաների ամբիոն, աստվորան (Երևան, ՀՀ)

emmatavadyan@gmail.com

Հանգուցարաներ. Մակրոտնտեսական ցուցանիշներ, հարկային գործառնություններ, հարկային դրույրաչափեր, տնտեսական աճ, ՀՆԱ, արտահանում, ներմուծում, առևտրային հաշվեկշիռ, գործադրկություն, գնան, ԵԱՏՄ:

Анализ влияния стимулирующей функции налогов на макроэкономические показатели стран ЕАЭС

Тавадян Эмма А.

Аспирант АГЭУ, Кафедра финансов (Ереван, РА)

emmatavadyan@gmail.com

Аннотация. Макроэкономические показатели следует рассматривать как единую систему. Выделение только одного показателя не способствует экономическому развитию. Если экономический рост сопровождается более высокими темпами импорта, чем экспорта, он обычно увеличивает внешний долг, не снижает безработицу и даже в краткосрочной перспективе может оказать негативное влияние на ВВП. Определяющее значение здесь имеет структура импорта. Если в импорте преобладают сырье и оборудование, это позитивный сигнал для экономического развития, а если преобладает готовая продукция, это показатель общества-потребителя. Рост экспорта играет ключевую роль, особенно в странах с небольшой экономикой, где рынок ограничен, в то время как экспорт готовой продукции, который включает в себя более высокую добавленную стоимость, как правило создает дополнительные рабочие места и способствует росту занятости. Здесь также важна структура экспорта. Если в экспорте преобладает готовая продукция, это положительный сигнал для экономики. Если преобладает экспорт сырья, это не оказывает положительного влияния на развитие экономики. Важным фактором здесь являются воздействия функций налогов на макроэкономические показатели. Ключевые экономические показатели в странах ЕАЭС следует оценивать системно, с учетом эффективности воздействия функций налогов на данные показатели. Функции налогов должны быть направлены на оптимизацию четырех взаимосвязанных макроэкономических показателей: ВВП, торговый баланс, занятость и инфляция.

Ключевые слова: Макроэкономические показатели, функции налогов, ставки налогов, экономический рост, ВВП, экспорт, импорт, торговый оборот, занятость, ЕАЭС.

Analysis of the Impact of the Tax Incentive Function on the Macroeconomic Indicators in the Eaeu Countries

Tavadyan Emma A.

PhD student at Armenian State University of Economics, Chair of Finance (Yerevan, RA)

emmatavadyan@gmail.com

Abstract: Macroeconomic indicators should be considered in a single system. The singling out of only one indicator does not contribute to the economic development. If economic growth is accompanied by higher imports than exports, it usually increases external debt, does not reduce unemployment, and even in the short run may have a negative impact on GDP. The import structure is of decisive importance here. If raw materials and equipment predominate in imports, this is a positive signal for economic development, and if finished products predominate, this is an indicator of a consumer society. Export growth plays a key role, especially in small economies where the market is limited, while the export of finished goods, which include higher added value, tend to create additional jobs and boost employment. The structure of exports is also important here. If finished goods prevail in exports, it is a positive signal for the economy. If, in the other hand, the export of raw materials prevails, it has a negative effect on economic development. An important factor here is the impact of taxation functions on macroeconomic indicators. Key economic indicators in the EAEU countries should be assessed systematically, considering the effectiveness of the impact of tax functions on those indicators. The functions of taxation should be aimed at optimizing the following four interrelated macroeconomic indicators: GDP, trade balance, employment, and inflation.

Key words: Macroeconomic indicators, tax functions, tax rates, economic growth, GDP, exports, imports, trade turnover, employment, EAEU

Տնտեսական քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայման է մակրոտնտեսական ցուցանիշների համակարգումը և դրանց վրա հարկային գործառնությունների ազդեցության գնահատումը:

Խտացված ձևով առանցքային մակրոտնտեսական ցուցանիշները ներկայացված են այսպես կոչված «գերմանական քառակուսիում»: Տնտեսական աճին նպաստող սկզբունքները համակարգված են Գերմանիայի տնտեսական կայունությանը և աճին նպաստող օրենքում [1]: Այդ սկզբունքները հետևյալն են.

1. Կայուն տնտեսական աճ,
2. Հավասարակշռված արտաքին առևտուր,
3. Չբաղվածության բարձր մակարդակ,
4. Գների կայունություն:

Տվյալ սկզբունքները անվանվել են “մոգական քառակուսի” և դրանք պետք է հաշվի առնվեն բյուջեի ֆինանսական պլանների ձևավորման ժամանակ: Ընդ որում, առաջնություն է տրվում բոլոր չորս ցուցանիշներին: Դրանք դիտարկվում են, որպես միասնական համակարգ, քանզի միայն մեկ ցուցանիշի առանձնացումը չի նպաստում տնտեսության զարգացմանը: Այստեղ գործում է Գուդհարթի օրենքը [3]: Եթե պետությունը ուշադրություն է դարձնում միայն ՀՆԱ-ի աճի վրա, հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրում, առանց շեշտելու արտահանման աճի հնարավորությունները, զբաղվածության հիմնախնդիրները, այդ ցուցանիշներին համապատասխանող ցածր գնանը, ապա դա չի տալիս հնարավորություն ապահովել կայուն տնտեսական աճ: Արդյունքում ՀՆԱ-ի աճը կարող է լինել միայն ժամանակավոր: Նշենք որ այս սկզբունքների ձևավորումը աջակցեց Գերմանիային արագ վերականգնել իր տնտեսությունը և ապահովել բարձր տնտեսական աճ:

Փաստացի ներկայացված չորս ցուցանիշները բնութագրում են տնտեսական աճը: Այստեղ առանձնացված է կայուն տնտեսական աճը և որպես հիմնական ցուցանիշ դիտարկվում է իրական համախառն ներքին արդյունքը, նրա աճի տեմպը. այսինքն հաշվի է առնվում գնահի գործոնը: ՀՆԱ-ի ցուցանիշի միջոցով որոշվում է նաև մեկ շնչի ընկնող համախառն ներքին արդյունքը, որը բնութագրում է տվյալ երկրի զարգացման մակարդակը: Տնտեսական աճը բնութագրվում է նաև որակական հատկանիշներով, սոցիալական արդյունավետության աստիճանով, կրթության, բժշկության մակարդակով: Իհարկե, առաջնահերթ դեր ունի տնտեսական աճի քանակական ցուցանիշները, քանզի արդյունավետ քաղաքականության պարագայում դա հնարավորություն է ստեղծում լուծելու նաև տնտեսական աճի որակական հիմնախնդիրները:

Եթե տնտեսական աճին զուգորդում է ներմուծման ավելի բարձր տեմպ, քան արտահանման, ապա դա, որպես կանոն, մեծացնում է արտաքին պարտքը, չի նվազեցնում գործազրկությունը և նույնիսկ կարճաժամկետ հատվածում կարող է բացասական անդրադառնալ ՀՆԱ-ի վրա: Այստեղ առաջնային դեր ունի ներմուծման կառուցվածքը: Եթե ներմուծման մեջ գերակշռում է հումքը և սարքավորումները, ապա դա դրական ազդակ է տնտեսության զարգացման առումով, իսկ եթե գերակշռում է պատրաստի արտադրանքը, ապա դա սպառող հասարակության ցուցանիշ է: Հատկապես փոքր տնտեսություն ունեցող երկրներում, որի շուկան սահմանափակ է, կարևորագույն դեր ունի արտահանման աճը, ընդ որում պատրաստի արտադրանքի արտահանումը, որը իր մեջ ներառում է ավելի մեծ նոր ստեղծվող արժեք և, որպես կանոն, ձևավորում է լրացուցիչ աշխատատեղեր ու նպաստավոր է զբաղվածության աճի տեսանկյունից: Այստեղ նույնպես կարևոր է արտահանման կառուցվածքը: Եթե արտահանման մեջ գերակշռում է պատրաստի արտադրանքը, ապա դա հանդիսանում է տնտեսության դրական ազդակ: Իսկ եթե գերակշռում է հումքի արտահանումը, ապա դա դրական չի անդրադառնում տնտեսության զարգացման վրա: Այստեղ կարևոր գործոն են հանդիսանում հարկերի խթանիչ և կարգավորիչ գործառնությունները [10]: Նշենք, որ հիմնական հարկային գործառնություններն են ֆիսկալ, կարգավորիչ և խթանիչ գործառնությունները [8; 11]:

Համախառն ներքին արդյունքի աճի արտահանման մեծացման և նրա կառուցվածքի արդիականացման հետ ուղղակի փոխկապակցված է զբաղվածության բարձր մակարդակը: Մովորաբար, բացասական առևտրային հաշվեկշիռն ուղղորդում է գործազրկության բարձր մակարդակ: Այս ցուցանիշին սերտ փոխկապակցված են: Որպեսզի տնտեսական միջավայրը լինի կանխատեսելի, առաջնահերթ դեր ունի գների կայունությունը: Գների կայունությունը չի նշանակում անփոփոխ գներ: Հատկապես տնտեսական զարգացման բարձր տեմպի նպաստելու դեպքում, որը ուղղորդվում է մեծ քանակի ներդրումներով, որպես կանոն, տեղի է ունենում գնահ: Սակայն, գնանը որոշակի սահման չպետք է անցնի: Զանգի ներդրումներ և դրանց միջոցով պատրաստի արտադրանքի ստացման գործընթացում առկա է որոշակի ժամանակաշրջան: Այդ դեպքում փողի զանգվածը մեծանում է շուկայում, իսկ պատրաստի արտադրանքի ծավալի աճը նույն տեմպը չի ունենում: Նույն Գերմանիայում, որտեղ գնանը տարեկան 2%-ի շրջանակներում է և չի գերազանցում տվյալ ցուցանիշը, 1970-1973 թվականներին զգալի տնտեսական աճի

ժամանակ եղել է մոտ 6%: Իսկ 1973 թվականին եղել է 7,9% [4]: Նշենք, որ այդ տարիներին տնտեսական աճը գերազանցել է միջինում 4%-ը: 1991 թվականին գնաճը կազմել է 5.75%: Այդ տարի տնտեսական աճը գերազանցել է 5%-ը [2]: Դա ցույց է տալիս, որ առանցքային տնտեսական ցուցանիշները պետք է գնահատվեն համակարգված ձևով, և հարկային գործառնությունների արդյունավետությունը նույնպես պետք է գնահատվի՝ ելնելով դրանց ազդեցությունից այդ չորս առանցքային ցուցանիշների վրա:

Տնտեսական զարգացումը ներկայացնող այս փոխկապակցված ցուցանիշները՝ կայուն տնտեսական աճը, հավասարակշռված արտաքին առևտուրը, զբաղվածության բարձր մակարդակը, գների կայունությունը, առանցքային դեր ունեն հատկապես Հայաստանի Հանրապետության համար: Նշված ցուցանիշները հատկապես առևտրային հաշվեկշռում արտահանման էական աճը ունեն վճռական նշանակություն փոքր տնտեսություն ունեցող երկրի համար: Արտահանման էական աճը այդ կարգի երկրներում հատկապես կարևոր է, քանզի ներքին շուկան սահմանափակ է:

Այս նպատակային ցուցանիշների կատարման համար Եվրամիությունում ձևավորվել են Մասստրիխտյան հայտանիշները, որոնք ունեն նորմատիվ բնույթ: Տվյալ մակրոտնտեսական ցուցանիշների համախումբը նշված են 1992 Մասստրիխտյան պայմանագրում [6]: Առանձնացված են հետևյալ ցուցանիշները՝ պետական բյուջեի դեֆիցիտ, պետական պարտք, գնաճի մակարդակ, ազգային արժույթի փոխարժեք, պետական պարտատոմսերի տոկոսադրույքներ:

1. Պետական բյուջեին պետք է ունենա դրական կամ զրոյական սալդո: Բացառիկ դեպքում հնարավոր է պետական բյուջեի դեֆիցիտ՝ չգերազանցող ՀՆԱ-ի 3%-ը:

2. Պետական պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 60%-ը կամ կայուն մոտենա այդ ցուցանիշին:

3. Գնաճը այն պետությունում, որը համարվում է թեկնածու Եվրամիության անդամ դառնալու համար, չպետք է գերազանցի ավելի քան 1.5% այն Եվրամիության անդամ 3 երկրների գնաճի ցուցանիշին, որոնք ունեն գնաճի առումով լավագույն արդյունք: Այսինքն այդ Եվրամիության երկրներում գրանցվել է գնաճի նվազագույն մակարդակ:

4. Եվրամիության անդամ դառնալու թեկնածու երկիրը պետք է առնվազն երկու տարի մասնակցի Եվրամիության հետ փոխարժեքի մեխանիզմին և ապահովի իր փոխարժեքի նվազագույն տատանումները, կայունությունը՝ եվրոյի նկատմամբ:

5. Պետական պարտատոմսերի երկարաժամկետ տոկոսադրույքները տաս տարվա

ժամկետով չպետք է լինեն ավելի քան 3 տոկոսային կետ բարձր, այդ Եվրամիության 3 երկրների միջին տոկոսադրույքներից, որոնք ունեն լավագույն արդյունքը գների կայունության առումով:

Եվրասիական տնտեսական միությունում, ելնելով տրանսֆորմացվող երկրների յուրահատկություններից, ներկայացված հայտանիշներին մոտ սկզբունքներով ձևավորվել են համապատասխան հայտանիշներ [9]

1. Պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 3%:

2. Պետական կառավարման պարտքը չպետք է գերազանցի ՀՆԱ-ի 50%-ը:

3. Գնաճի մակարդակը՝ սպառողական գների ինդեքսը, տարեկան արտահայտությամբ, այսինքն տոկոսային արտահայտությամբ՝ նախորդ տարվա դեկտեմբերի դրությամբ, չպետք է գերազանցի 5%-ային կետով, ԵԱՏՄ երկրի այն գնաճային մակարդակը, որը ունի գնաճի ամենացածր մակարդակը:

4. ԵԱՏՄ պայմանագրում ձևավորված չեն կոնկրետ դրույթներ ազգային արժույթի մասով:

5. Պետական պարտատոմսերի տոկոսադրույքների վերաբերյալ հողվածը պայմանագրում բացակայում է:

Այս ցուցանիշների սահմանափակումները ներկայացվում են, որպես անհրաժեշտ պայմաններ տնտեսական աճի առումով:

Եվրասիական տնտեսական միությունում փաստացի գործում է երկու սահմանափակում՝ պետական բյուջեի և պետական պարտքի մասով: Ազգային արժույթի և պետական պարտատոմսերի տոկոսադրույքի առումով որևէ սահմանափակում ԵԱՏՄ-ում առկա չէ: Գնաճի մասով՝ սահմանափակումը այնքան մեծ է, որ կարող է բերել այս կամ այն երկրի գների աճին և հաճախ փոխարժեքի ավելի էական փոփոխության: Դա անմիջապես բացասական է անդրադառնում արտահանման վրա այն երկրի, որը ապահովում է համեմատաբար ցածր գնաճ և փոխարժեքի կայունություն: Գնաճը հանդիսանալով նպատակային ցուցանիշ ունի սահմանափակումներ, հատկապես Մասստրիխտյան պայմանագրում:

Հարկային քաղաքականությունը, խթանիչ գործառնության առումով, պետք է ուղղված լինի չորս փոխկապակցված նպատակային ցուցանիշների օպտիմալացմանը: Հարկային բարեփոխումները, ֆինկալ գործառնության տեսանկյունից, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հարկերի նվազեցման պարագայում, որը նպաստավոր է խթանիչ գործառնության համար, պետք է բերեն նաև ծախսերի կարճաժամկետ կրճատման, քանզի կոնկրետ ԵԱՏՄ պայմանագրով պետական բյուջեի դեֆիցիտը չի կարող գերազանցել 3%-ը, իսկ պետական

պարտքը չի կարող գերազանցել ՀՆԱ-ի 50%-ը: Այսինքն, հարկային ֆիսկալ, կարգավորիչ, խթանիչ գործառնությունները իրականացնելիս, եկամուտների փոփոխության պարագայում, դրան համապատասխան պարտադիր պետք է փոփոխվեն պետական բյուջեի ծախսերը, քանզի պետական պարտքի մասով առկա է ԵԱՏՄ պայմանագրով սահմանված հստակ սահմանափակում:

ԵԱՏՄ անդամակցելուց հետո 2018 և 2019 թվականին ԵԱՏՄ բոլոր երկրները ունեցել են տնտեսական աճ: Մասնավորապես ՀՆԱ-ն 2019 թվականին զգալի աճել է Հայաստանում (7,6%), Ղազախստանում (4,5%) և Ղրղզստանում (4,6%) [5]:

Ռուսաստանը ունենալով համեմատաբար ցածր տնտեսական աճ (2019 թվականին 2%), ունի դրական առևտրային սալոդո (արտահանում՝ 481,537 մլրդ դոլար, ներմուծում՝ 352,811 մլրդ դոլար) և գործազրկության ցածր մակարդակ՝ 4,6%, որը չի գերազանցում 5%-ը: Ռուսաստանի գնաճը վերջին 5 տարիներին չի գերազանցել 5%-ը: Այսպիսով, նպատակային ցուցանիշների համակարգված վերլուծության և գնահատման պարագայում կարելի է նշել, որ հարկային համակարգը դրական է անդրադառնում բոլոր չորս՝ ՀՆԱ, առևտրային հաշվեկշիռ, գործազրկություն, գնաճ նպատակային ցուցանիշների վրա: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ Ռուսաստանում հարկային գործառնությունները հավասարակշռված են՝ ելնելով տվյալ երկրի տնտեսության կառուցվածքից, որտեղ էներգակիրների արտադրությունը և արտահանումը ունի որոշիչ դեր:

Բելառուսում նույնպես ունի ոչ բարձր տնտեսական աճ: 2019 թվականին այն կազմել է 1,4%: Մակայն առևտրային հաշվեկշիռը հավասարակշռված է և գործազրկության մակարդակը ցածր է՝ 5%-ի շրջանակներում է: Գնաճի առումով Բելառուսում նույնպես առկա է առաջընթաց. եթե 2015-2016 թվականներին գնաճը գերազանցել է 10%-ը, ապա 2018-2020 թվականներին այն գտնվում է 5%-ի շրջանակներում: Չնայած եկամտահարկը Բելառուսում ցածր է և կազմում է 13%, սակայն հարկերի ֆիսկալ գործառնության կատարմանը նպաստում է բարձր ապահովագրության վճարները, որոնք կազմում են 35%: Ելնելով նրանից, որ Բելառուսի առևտրային հաշվեկշիռը չունի բացասական սալոդո և գործազրկության մակարդակը բավականին ցածր է, նույնիսկ Եվրամիության երկրների համեմատ, կարելի է նշել, որ ելնելով Բելառուսի տնտեսության կառուցվածքից, որը չունի էներգակիր հումքեր, հարկային գործառնությունները հիմնականում հավասարակշռված են:

Ղազախստանում 2017-2019 թվականներին գրանցվել է ՀՆԱ-ի տնտեսական աճ, որը գերազանցել է 4%-ը: Առևտրային հաշվեկշիռը ակնհայտ դրական է, գործազրկության մակարդակը ցածր է, չի գերազանցում 5%-ը, որոշակի խնդիրներ առկա են գնաճի և ազգային դրամի՝ տենգեի, փոխարժեքի կայունության հետ: Գնաճը 2017 թվականին գերազանցել է 7%-ը, իսկ 2018-2019 թվականներին՝ 5%-ը: Ունենալով հարկային դրույքաչափի ցածր մակարդակ, նշենք, որ ԱԱՀ-ը 12% է, հարկային համակարգը իրականացնում է իր ֆիսկալ գործառնությունը նաև նպատակային ցուցանիշների առումով չի հակասում խթանիչ գործառնության: Ինչը վերաբերում է գնաճին, քանզի հարկային դրույքաչափերը ցածր են, փաստացի էական ազդեցություն չունեն գնաճի վրա: Այստեղ առաջին հերթին Ղազախստանը դեռևս ունի խնդիր դրամավարկային քաղաքականության ճշգրտման առումով: Ֆիսկալ գործառնության տեսանկյունից Ղազախստանը կարողանում է լուծել իր խնդիրները նաև այլ ոչ հարկային եկամուտների աղբյուրներից, քանզի Ղազախստանը հարուստ է էներգակիր հանածոներով:

Ղրղզստանում ՀՆԱ-ի աճը 2019 թվականին կազմել է 4,6%: Ղրղզստանը ունի լուրջ խնդիր առևտրային հաշվեկշռի առումով, այն ակնհայտ բացասական է: Ներմուծումը գերազանցում է արտահանումը գրեթե 2 անգամ: Գործազրկության մակարդակը բարձր չէ, կազմում է 7%, սակայն սա պաշտոնական տվյալ է և իրական գործազրկության մակարդակը կարող է լինել ավելի բարձր: Վերջին տարիներին գնաճը չի գերազանցել 3%-ը, միայն 2020 թվականին ավելի բարձր է եղել, քան 6%-ը: Հաշվի առնելով առևտրային հաշվեկշռի ոչ բարվոք իրավիճակը, Ղրղզստանը ունի լուրջ խնդիր արտահանման զարգացման առումով, առավել ևս, իրենց ներքին սպառման ներուժը նույնպես սահմանափակ է, ինչպես և Հայաստանում: Մակայն հաշվի առնելով Ղրղզստանի ցածր հարկային դրույքաչափերը և այն, որ Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունը Ղրղզստանում կազմում են ընդամենը 17,7% այստեղ հարկային գործառնության առումով Ղազախստանը փաստացի հարկային դրույքաչափերի կրճատման հնարավորություն չունի:

Համախառն ներքին արդյունքի աճը 2019 թ. Հայաստանում կազմել է 7.6 տոկոս, որը ամենաբարձր ցուցանիշներից է վերջին տարիների համար: Մակայն պետք է նշել, որ տնտեսության կառուցվածքի էական արդիականացում տեղի չի ունեցել: Գործազրկության մակարդակը էապես գերազանցում է ԵԱՏՄ բոլոր երկրների գործազրկության ցուցանիշին: Ըստ պաշտոնական տվյալներին, 2019 թ-ին գործազրկության մակարդակը կազմել է 18,8%: Փաստացի վերջին

տարիներին այս առումով մենք որևէ առաջընթաց չունենք: Եվ սա լուրջ ազդակ է տնտեսության զարգացման տեսանկյունից:

Այն, որ տնտեսական կառուցվածքի փոփոխություն տեղի չի ունեցել ցույց են տալիս նաև արտահանման ցուցանիշները: Հայաստանում ներմուծումը գրեթե կրկնակի գերազանցում է արտահանումը: Առանցքային դեր ունի արտահանման աճի տեմպերի զգալի մեծացումը և նրա կառուցվածքի արդիականացումը՝ առաջնություն տալով պատրաստի արտադրանքի արտահանմանը: Այս առումով անհրաժեշտ է

նաև հարկային գործառնությունների արդյունավետ կիրառումը:

Արտահանումը 2019 թվականին աճել է 14 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է արտահանման աճով դեպի Ռուսաստան (10.3%) և դեպի Չինաստան (75.2%): Այս պարագայում արտահանումը դեպի Եվրամիություն նվազել է 14.7%: ՀՀ արտահանման կառուցվածքը պատկերված է աղյուսակում: Ըստ տարիների, ներկայացված են տասներկու այն երկրները, որտեղ արտահանումը կազմում է ամենամեծ ծավալը:

Աղյուսակ 1. ՀՀ արտահանման կառուցվածք (հազար ԱՄՆ դոլար)

2018			2019			2020		
Ընդհ. (արտահանում, հազար ԱՄՆ \$)	2,412,433	100%	Ընդհ. (արտահանում, հազար ԱՄՆ \$)	2,648,583	100%	Ընդհ. (արտահանում, հազար ԱՄՆ \$)	2,536,993	100%
Ռուսաստանի Դաշնություն	665,769	27.6%	Ռուսաստանի Դաշնություն	742,696	28.0%	Ռուսաստանի Դաշնություն	680,357	26.8%
Շվեյցարիա	337,460	14.0%	Շվեյցարիա	457,859	17.3%	Շվեյցարիա	453,953	17.9%
Բուլղարիա	214,889	8.9%	Բուլղարիա	207,413	7.8%	Չինաստան	289,826	11.4%
Իրաք	150,638	6.2%	Չինաստան	193,710	7.3%	Իրաք	163,827	6.5%
Գերմանիա	136,075	5.6%	Իրաք	177,291	6.7%	Բուլղարիա	150,800	5.9%
Նիդեռլանդներ	132,356	5.5%	Նիդեռլանդներ	153,851	5.8%	Նիդեռլանդներ	97,773	3.9%
Չինաստան	107,222	4.4%	Իրանի Իսլամական Հանրապետություն	83,865	3.2%	Արաբական Միացյալ Էմիրություններ	95,925	3.8%
Իրանի Իսլամական Հանրապետություն	94,204	3.9%	Գերմանիա	69,617	2.6%	Իրանի Իսլամական Հանրապետություն	84,557	3.3%
Արաբական Միացյալ Էմիրություններ	73,826	3.1%	Վրաստան	69,265	2.6%	Միացյալ Նահանգներ	67,868	2.7%
Վրաստան	68,685	2.8%	Կանադա	61,229	2.3%	Վրաստան	57,450	2.3%
Միրիայի Արաբական Հանրապետություն	55,913	2.3%	Իտալիա	59,687	2.3%	Գերմանիա	56,472	2.2%
Ռումինիա	54,937	2.3%	Արաբական Միացյալ Էմիրություններ	57,273	2.2%	Իտալիա	40,970	1.6%

Անհրաժեշտ է նշել, որ 2019 թ. արտահանումը դեպի Ռուսաստանի Դաշնություն աճել է 11.6% [7], որը ԵԱՏՄ առանցքային գործընկերն է: Այստեղ արտահանվում է հիմնականում պատրաստի արտադրանք, որը ունի ավելացված արժեքի ավելի բարձր տոկոս:

Արտահանման աճը ակնհայտ դրական արդյունք է և համահունչ է տնտեսական աճի հետ: Սակայն արտահանման կառուցվածքի տեսանկյունից դեռևս էական փոփոխություններ

տեղի չեն ունեցել: Արտահանման 28%-ը կազմում է հանքանյութը, քարերն ու մետաղները 26% և սննդամթերքը 24%: Արտահանման այլ կարևոր ոլորտներից է զբոսաշրջությունը, որը 2019թ. աճել է 14.7%, կազմելով 1.9 միլիոն մարդ: 2017-2019 թվականներին զբոսաշրջությունը աճել է մոտ 60%: Սակայն այլ ցուցանիշների առումով ՀՆԱ-ի և արտահանման կառուցվածքը էապես չի փոխվել: Հարկային բարեփոխումները, հարկերի խթանիչ գործառնության առումով,

առաջին հերթին պետք է ուղղված լինեն պատրաստի արտադրանքի արտահանման էական աճին, ինչը հանդիսանում է հիմնական ռեզերվ, նաև գործազրկության զգալի կրճատման համար: Նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում ունենալով գնանի դրական ցուցանիշներ՝ այն չի գերազանցել 2,5%-ը գործազրկության տեսանկյունից՝ առայժմ էական առաջխաղացում առկա չէ: 2015-2020 տարվա ընթացքում գործազրկությունը փաստացի չի նվազել, նույնիսկ քսան թվականին աճել է: Այսպիսով հարկերի խթանիչ գործառույթը ստանում է առաջնահերթ դեր պատրաստի արտադրանքի արտահանման և դրա հետ անմիջապես փոխկապակցված գնանի նվազման առումով:

Հաշվի առնելով, որ Հայաստանից դեպքի Ռուսաստան արտահանումը կազմում է 25%-ը, ընդ որում պատրաստի արտադրանքի գերակշիռ մասն է արտահանվում դեպի Ռուսաստան, ապա հատկապես այդ ապրանքների նկատմամբ հարկային համակարգի խթանիչ գործառույթը կիրառելու պարագայում, կանի արտահանումը դեպի Ռուսաստան: Եվրամիություն և Չինաստան հիմնականում արտահանվում է գունավոր մետաղների հումք, այստեղ ավելի մեծ դեր տալով ֆիսկալ գործառույթին, մասնավորապես արտահանման մաքսատուրքի և սահմանային գների միջոցով, դրանով իսկ կիթանվի դրանց վերամշակումը, որը նպաստավոր է արտահանման ծավալների

մեծացման առաջնահերթ խնդրի լուծման և գործազրկության կրճատման:

Օգտագործված գրականության ցանկ

1. Act to Promote Economic Stability and Growth. URL: <http://bit.ly/2FUajzK>
2. Be5.biz/makroekonomika/gdp/de.html#main
3. **Goodhart C. A. E.** Problems of Monetary Management: The U.K. Experience // Papers in Monetary Economics, Reserve Bank of Australia, 1975
4. Historic inflation Germany – CPI inflation // <http://www.inflation.eu/inflation-rates/germany/historic-inflation/cpiinflation-germany.aspx>
5. <https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD>
6. Introducing the Euro: Convergence Criteria. URL: <http://bit.ly/2FWleZY>
7. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներ www.armstat.am
8. **Глухов В. В., Дольде И. В.** «Налоги: теория и практика» Санкт-Петербург. 2002.
9. Договор о Евразийском экономическом союзе. Астана, 2015.
10. **Кугаенко А. А., Белянин М. П.** «Теория налогообложения». – М. 2019.
11. **Под. ред. Тарасовой В. Ф.** «Налоги и налогообложение». – М. 2018.

Сдана/Հանձնվել է՝ 12.09.2021
 Рецензирована/Գրախոսվել է՝ 20.09.2021
 Принята/Ընդունվել է՝ 25.09.2021